

Սյունիքում անցկացվեց <<Ընթերցանության օլիմպիադա 2015>>-ի մարզային փուլը

Փետրվարի 17-27-ին ՀՀ կրթության և գիտության նախարարության աջակցությամբ և <<Անտարես>> հրատարակչության նախաձեռնությամբ հանրապետության բոլոր դպրոցներում անց է կացվում <<Ընթերցանության օլիմպիադա 2015-ը>>, որին մասնակցում են 6-րդ դասարանցիները: Օլիմպիադային մասնակցելու համար աշակերտները նախապես գրանցվել են dasar.am կայքի համապատասխան բաժնում՝ ձեռք բերելով մասնակցության իրավունք և անցկացվում է երեք փուլով՝ դպրոցական, մարզային, հանրապետական: Մրցույթի ներդպրոցական փուլը կայացել էր փետրվարի 17-27-ին: Դպրոցական փուլում յուրաքանչյուր դպրոցից լավագույն արդյունք ցուցաբերած 2-ական աշակերտ մասնակցեցին մարզային փուլին: Կապանի թիվ 1 հիմնական դպրոցում անցկացվեց <<Ընթերցանության օլիմպիադա 2015>>-ի մարզային՝ 2-րդ փուլը: Սահմանված կարգին համապատասխան՝ նախապես կազմված ժյուրիի անդամների ներկայությամբ աշակերտն իր իսկ ընտրած գեղարվեստական գրքից պետք է ընթերցեր մի հատված: 1-ին փուլին մասնակցության իրավունք ստացած 75 աշակերտներից մարզային 2-րդ փուլին հրավիրվել էին ժյուրիի առավելագույն գնահատականին արժանացած 15 աշակերտներ՝ մարզի բոլոր տարածաշրջաններից: Այստեղ նույնպես աշակերտներն ընթերցեցին բնագրի նույն ծավալի հատված, սակայն ժյուրիի ընտրությամբ: Վերջնական գնահատական է ընդունվել երկու փուլերի գնահատականների հանրագումարը:

Մարզային փուլում 1-ին, 2-րդ և 3-րդ տեղեր զբաղեցրած 3 աշակերտներ իրավունք են ստացել մասնակցելու <<Ընթերցանության օլիմպիադա - 2015>>-ի հանրապետական փուլին, որը կկայանա ապրիլին՝ Հայաստանի գրողների միության մեծ դահլիճում:

Դպրոցական և մարզային փուլերի բոլոր հաղթողներին <<Անտարես>> հրատարակչության կողմից կտրվեն մրցանակներ և թանկարժեք նվերներ, որոնք կհանձնվեն հանրապետական փուլին:

Սյունիքում անցկացվեց <<Ընթերցանության օլիմպիադա 2014>>-ի մարզային փուլը

Փետրվարի 17-27-ին Սյունիքի մարզի տարածաշրջաններում անցկացվեց <<Ընթերցման օլիմպիադա-2015-ը>>: Դպրոցական փուլում յուրաքանչյուր դպրոցից լավագույն արդյունք ցուցաբերած 2-ական աշակերտ մասնակցեցին մարզային փուլին:

Փետրվարի 17-27-ին 33 կրթության և գիտության նախարարության աջակցությամբ և ,Անտարեստ հրատարակչության նախաձեռնությամբ հանրապետության բոլոր դպրոցներում անց է կացվում ,Ընթերցանության օլիմպիադա 2015-ը>>, որին մասնակցում են 6-րդ դասարանցիները: Օլիմպիադային մասնակցելու համար աշակերտները նախապես գրանցվել են dasar.am կայքում՝ ձեռք բերելով մասնակցության իրավունք: Օլիմպիադան անցկացվում է երեք փուլով՝ դպրոցական, մարզային, հանրապետական:

Կապանի թիվ 1 հիմնական դպրոցում <<Անտարեստ>> հրատարակչության կողմից, հերթական անգամ, 6-րդ դասարանցիների համար անցկացվեց <<Ընթերցանության օլիմպիադա 2015>>-ի մարզային՝ 2-րդ փուլը: Մրցույթի ներդպրոցական փուլը կայացել էր **փետրվարի 17-27-ին**: Մրցույթին մասնակցելու համար աշակերտները նախապես գրանցվել էին www.dasaran.am կայքի համապատասխան բաժնում՝ ձեռք բերելով մասնակցության իրավունք:

Սահմանված կարգին համապատասխան նախապես կազմված ժյուրիի անդամների ներկայությամբ աշակերտն իր իսկ ընտրած գեղարվեստական գրքից պետք է ընթերցեր մի հատված: 1-ին փուլին մասնակցության իրավունք ստացած 75 աշակերտներից մարզային 2-րդ փուլին հրավիրվել էին ժյուրիի առավելագույն գնահատականին արժանացած 15 աշակերտներ՝ մարզի բոլոր տարածաշրջաններից: Այստեղ նույնպես աշակերտները ընթերցեցին բնագրի նույն ծավալի հատված, սակայն ժյուրիի ընտրությամբ: Վերջնական գնահատական է ընդունվել երկու փուլերի գնահատականների հանրագումարը: Մարզային փուլում 1-ին, 2-րդ և 3-րդ տեղեր գրաված 3 աշակերտներ իրավունք են ստացել մասնակցելու <<Ընթերցանության օլիմպիադա 2015>>-ի հանրապետական փուլին, որը կկայանա **ապրիլին՝ Հայաստանի գրողների միության մեծ դահլիճում**:

Դպրոցական և մարզային փուլերի բոլոր հաղթողներին <<Անտարեստ>> հրատարակչության կողմից կտրվեն մրցանակներ և թանկարժեք նվերներ, որոնք կհանձնվեն հանրապետական փուլի ժամանակ:

Անցկացվեց ,Ընթերցանության օլիմպիադա 2015-ի մարզային փուլը

Փետրվարի 1-ից ՀՀ Կրթության և գիտության նախարարության աջակցությամբ և ,Անտարեստ հրատարակչության նախաձեռնությամբ հանրապետության բոլոր դպրոցներում անց է կացվում ,Ընթերցանության օլիմպիադա 2015-ը, որին մասնակցում են 6-րդ դասարանցիները: Օլիմպիադային մասնակցելու համար աշակերտները գրանցվել են dasar.am կայքում՝ ձեռք բերելով մասնակցության իրավունք: Օլիմպիադան անցկացվում է երեք փուլով՝ դպրոցական, մարզային, հանրապետական: Դպրոցական փուլն ավարտված է, այսօրվանից տրվել է մարզայինի մեկնարկը: Լոռու մարզային փուլն անց է կացվում Վանաձորի թիվ 4 հիմնական դպրոցում, որին մասնակցում է 101 աշակերտ մարզի բոլոր տարածաշրջանների դպրոցներից: Ինչպես նշում է Լոռու մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի պետ Գարիկ Տոնոյանը, օլիպիադայի ընթացքում կարևորվում է սահուն ընթերցանությունը, առողջանությունը և արտահայտչականությունը: Նպատակն է՝ սեր սերմանել գրքի ու գրականության, մայրենի լեզվի հանդեպ: Լավագույն միավորներ հավաքած աշակերտները կանցնեն երկրորդ փուլ, որից հետո մարզի լավագույնները կմասնակցեն արդեն հանրապետական փուլին:

Ամփոփվեց <<Ընթերցման օլիմպիադա 2014>>-ի մարզային փուլը

Այսօր ՀՀ Արմավիրի մարզպետարանում ամփոփվեց <<Ընթերցման օլիմպիադա 2014>>-ի մարզային փուլը, որին մասնակցում էր դպրոցական փուլում 1-ին և 2-րդ տեղ գրաված 34 աշակերտ:

Օլիմպիադայի մարզային փուլը ներկայացնող հանձնաժողովը, ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Գայանե Սայադյանի նախագահությամբ, հետևեց աշակերտների կողմից ընտրված հեղինակների ստեղծագործությունների հակիրճ ընթերցանությանը:

Այնուհետև գնահատող հանձնաժողովի առավելագույն գնահատականին արժանացած աշակերտները լրացուցիչ ընթերցեցին նաև նույն ծավալի հատված՝ արդեն հանձնաժողովի կողմից ընտրված գեղարվեստական գրքերից, որի արդյունքում էլ որոշվեցին հաղթողները:

,Ընթերցման օլիմպիադա 2014-ի մարզային փուլում 1-ին, 2-րդ և 3-րդ պատվավոր տեղերը գրավեցին և Հանրապետական փուլ անցնելու իրավունք ստացան Վաղարշապատի Խ. Աբովյանի անվան թիվ 4 հիմնական դպրոցի աշակերտ Աշոտ Առաքելյանը, Գ. Նժդեհի անվան թիվ 8 հիմնական դպրոցի աշակերտուհի Հասմիկ Հովհաննիսյանը և Ծիածանի միջնակարգ դպրոցի աշակերտուհի Սեդա Հովակիմյանը:

Շնորհավորելով հաղթողներին և շնորհակալություն հայտնելով բոլոր մասնակիցներին՝ մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետը մաղթեց, որ չդադարեն ընթերցել ու համալրել իրենց գիտելիքների պաշարը: <<Գիտելիքն այն ուժն է, որը օգնելու է ձեզ առավել վստահ քայլերով մուտք գործել մեծ կյանք և, ինչու չէ, պատվով հաղթահարել բոլոր փորձությունները>>,- իր խոսքում ընդգծեց Գ. Սայադյանը:

